ՆԱԶԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Երևանի պետական համալսարանի Հայ բանասիրության ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԱԻԴԱ ՏԻԳՐԱՆՅԱՆ
ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի ասպիրանտ

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հոդվածն անդրադառնում է Հայաստանում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում իրականացված բարեփոխումներին՝ ուղղված այն համակարգերի նեդրմանն ու գործարկմանը, որոնք նպաստում են ինտեգրմանը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին:

Հանգուցային բառեր և արտահայտություններ.
բարեփոխումներ, բարձրագույն կրթություն, կառավարում, որակավորումների ազգային շրջանակ, կրեդիտ, ուսանող, շարժունություն, փոխճանաչում:

2005թ. մայիսի 19-ին ստորագրելով Բոլոնիայի անդամ երկրների կրթության նախարարների Բերգենի Կոմյունիկեն[1] Հայաստանը պաշտոնապես միացավ Բոլոնիայի գործընթացին և ստանձնեց պատասխանատվություն՝ մինչև 2010թ. ավարտել Բոլոնիայի գործընթացի հիմնական սկզբունքների իրականացումն ըստ գործողությունների առանձին ուղղությունների և դառնալ կազմավորվող Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԲԿՏ) մաս:

Ինտեգրումը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին ենթադրում է ՀՀ միջին, բարձրագույն և շարունակական կրթական համակարգում խորքային փոփոխությունների իրականացում Բոլոնիայի գործընթացի պահանջներին համապատասխան, որը նշանակում է.

ներմուծել համընթեռնելի և համադրելի որակավորումների եռաստիճան համակարգ,

կատարել անցում ուսուցման կազմակերպման կրեդիտային համակարգին՝ միաժամանակ նախաձեռնելով կրթական ծրագրերի արմատական վերափոխումներ,

ներդնել մասնագիտական կրթության որակի գնահատման և ապահովման եվրոպական չափանիշներ՝ նպաստելով որակի հավաստման ազգային համակարգի ստեղծմանը,

կրեդիտների կուտակման և փոխանցման, որակի գնահատման և ապահովման համակարգերի, ճանաչման թափանցիկ ընթացակարգերի, ինչպես նաև դիպլոմի համաեվրոպական հավելվածի ներդրման միջոցով խթանել ուսանողների և դասախոսների շարժունությունն ու Հայաստանի բարձրագույն կրթական համակարգի գրավչությունը,

ստեղծել նախադրյալներ շարունակական կրթության համակարգի ձևավորման և զարգացման համար,

բարձրացնել ուսանողների դերը և մասնակցությունը, մասնավորապես բուհերի կառավարման գործընթացում,

ինտեգրել բուհերում կրթական և գիտական գործընթացները:

Որակավորումների եռաստիճան համակարգ: Հայաստանում բարձրագույն կրթության երկաստիճան (բակալավրիատ, մագիստրատուրա), այժմ

1 Communiqué of the Conference of European Ministers Responsible for Higher Education, Bergen, 19-20 May 2005

եռաստիճան, կառուցվածքի ներդրումը սկսվել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում 1992թ.-ին: Այնուհետև այն ներմուծվել է նաև Երևանի պետական համալսարան (1995թ.) և Հայաստանի գյուղատնտեսական ակադեմիա (1998թ.): Մագիստրոսի կրթական ծրագրով է սկսվել Հայաստանի ամերիկյան համալսարանի գործունեությունը (1991թ.): Անցումը բարձրագույն կրթության մեկ աստիճանից երկաստիճան համակարգին նշված բուհերում իրականացվել է գիտափորձի միջոցով՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշումների և բուհերի կանոնադրությունների հիման վրա: Բակալավրի և մագիստրոսի որակավորումները օրենսդրորեն ամրագրվել են ՀՀ «Կրթության մասին» օրենքով 1999թ.-ին:

2004/2005 ուսումնական տարվանից Հայաստանում ներդրվել է բարձրագույն կրթության երկաստիճան համակարգը[1]: 2004թ.-ից ՀՀ բոլոր բուհերում դադարեցվել է ընդունելությունը դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագրով, իսկ նույնանուն որակավորումը հավասարեցվել է մագիստրոսի որակավորմանը: ՀՀ «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքները նախատեսում են նաև հետազոտողի որակավորման շնորհումը հետբուհական մասնագիտական կրթության եռամյա ծրագրի ավարտին, որը Բոլոնիայի գործընթացի սկզբունքների համաձայն, բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի երրորդ աստիճանն է: 2006թ.-ին հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի ներդրման» ծրագիրը:

Նշված օրենքները բարենպաստ օրենսդրական հիմքեր են ստեղծել բարձրագույն և հետբուհական, շարունակական կրթության համակարգի ընդհանուր բարեփոխումների, ինչպես նաև՝ Բոլոնիայի սկզբունքներով ուղղորդվող կառուցվածքային բարեփոխումների համար: Դրանց ընդունումից հետո ՀՀ կրթության համակարգում աշխատանքներն նպատակաուղղել են միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում բազմակողմանի բարեփոխումների իրականացմանը, որոնք ներառում են կրթության կառուցվածքը, բովանդակությունը, կառավարումը, և որոնց նպատակն է ապահովել ՀՀ մասնագիտական կրթության համակարգի առավել ինտեգրումը ԵԲԿՏ-ին և խթանել միջազգային ասպարեզում կրթական համակարգի մրցունակությունը:

Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգ: Բոլոնիայի գործընթացի շրջանակներում կատարվող աշխատանքների կարևորագույն ուղղություններից է բարձրագույն կրթության կազմակերպումը ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով՝ Եվրոպական կրեդիտների փոխանցման համակարգին (ԵԿՓՀ- ECTS) համապատասխան: ՀՀ կառավարությունը հաստատել է «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» որոշումը[2], որից հետո համապատասխան քայլեր են ձեռնարկվել բարձրագույն կրթության՝ կրեդիտային համակարգով կազմակերպման ուղղությամբ: Այնուհետև հաստատվել է «Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործման ժամանակացույցը»[3], որը միասնական պահանջներ է սահմանել բարձրագույն կրթության ոլորտի համար կրեդիտային համակարգին

1 «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք (2004թ.), ՀՀ կառավարության N 425-Ն որոշում, 2004 թ. մարտի 31

2 ՀՀ կառավարության N 2307-Ն որոշում, 2005թ. դեկտեմբերի 22

3 ՀՀ կառավարության արձանագրային որոշում, 2006թ. նոյեմբեր

անցման, կրթության որակի ապահովման համար: Կրեդիտային համակարգի անցման գործընթացին աջակցելու նպատակով մշակվել և բուհերին են տրամադրվել «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսման գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգը», կրեդիտային համակարգի ներդրման մեթոդական ուղեցույցը: Գործող մասնագիտությունների ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը վերակազմվել են մոդուլային սկզբունքով և կրեդիտային հենքով: Բուհերի մեծ մասում արդեն իսկ բավարար դրական փորձ է կուտակվել, մասնավորապես՝ բուհերի կողմից մշակվել, հրատարակվել և շրջանառության մեջ են դրվել դասախոսների և ուսանողների համար նախատեսված «Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման ուղեցույց»-ները: Որոշակի մասնագիտությունների գծով մի շարք բուհերի (ՀՊՃՀ, ԵՊՀ, ԵՊՏՀ, ԵՊԼՀ, Ռուս-հայկական (սլավոնական) համալսարան և այլն) կոնսորցիումի արդյունքում ձեռք է բերվել համաձայնություն՝ միասնական չափանիշներով կրեդիտային համակարգին անցնելու կապակցությամբ:

Որակի ապահովում և գնահատում: Եվրոպական կրթական տարածքին Հայաստանի ինտեգրման ուղղությամբ կատարվող կարևորագույն աշխատանքներից է եվրոպական չափանիշներին համապատասխան որակի ապահովման և գնահատման ազգային համակարգի ստեղծումը: 2008թ.հիմնադրվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը[1]:2008թ.-ի մարտի 4-ին Բրյուսելում տեղի է ունեցել Որակի Հավաստման Եվրոպական Ռեգիստրի հիմնադիր նիստը, որին մասնակցում էին Բոլոնիայի անդամ երկրները և սոցիալական գործընկերները: Հայաստանը դարձել է Որակի հավաստման եվրոպական ռեգիստրի լիիրավ անդամ:

Գրեթե բոլոր բուհերում ստեղծվել են որակի ապահովման ներբուհական միավորներ, որոնց կողմից իրականացվում են բուհի որակի ապահովման և գնահատման մեխանիզմների ներդրման աշխատանքներ: Մասնավորապես, ներդրվել է «Պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքների գնահատման բազմագործոնային ռեյտինգավորման (վարկանիշային) համակարգ»: Կատարվել են ներքին մոնիտորինգային հետազոտություններ՝ ուսանողների, դասախոսների և գործատուների շրջանում, որոնք թույլ են տվել հստակեցնել այն բացթողումները, որոնք առկա են ուսումնական գործընթացում: Բուհերը մշակել և իրենց խորհուրդներում հաստատել են զարգացման ռազմավարական ծրագրեր և հայեցակարգեր:

«ԵԲԿՏ-ի որակի ապահովման չափանիշներին և ուղեցույցներին» համապատասխան մշակվել և հաստատվել են «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները» և «ՀՀ-ում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը»[2]: 2015թվականին «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը համապատասխան որոշումներ ընդունեց՝ Երևանի պետական համալսարանին 6 տարի ժամկետով, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանին 4 տարի ժամկետով, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանին 4 տարի ժամկետով, Երևանի «Գլաձոր» համալսարանին 4 տարի ժամկետով,

1 ՀՀ կառավարության N 1486-Ն որոշում, 2008թ. նոյեմբերի 27

2 ՀՀ կառավարության N959-Ն, N 978-Ն որոշումներ, 2011թ հունիսի 30

Հայաստանի ազգային ագրարային համալսարանին 4 տարի ժամկետով, Հյուսիսային համալսարանին 2 տարի ժամկետով, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանին 4 տարի ժամկետով, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիային 4 տարի ժամկետով, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանին 4 տարի ժամկետով, «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանին 2 տարի ժամկետով, ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման մասին[1] :

Որակավորումների ազգային շրջանակ: Բոլոնիայի գործընթացի առանցքային ուղղություններից է եվրոպական որակավորումների շրջանակին համապատասխան որակավորումների ազգային շրջանակի ստեղծումը (ՈԱՇ): ՈԱՇ-ի մշակման աշխատանքներն ընթացել են Եվրոպական խորհրդի փորձագիտական աջակցությամբ: ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակը[2] (Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումները և դրանց համապատասխան ընդհանրական բնութագրերը), ինչպես նաև կրթության որակավորումների ազգային շրջանակի ներդրման և գործարկման ուղեցույցը:

Ուսանողների, դասախոսների, շրջանավարտների շարժունություն և որակավորումների, դիպլոմների ու կրթական վերջնարդյունքների փոխճանաչում: Ուսանողների, դասախոսների և շրջանավարտների անարգել շարժունությունը ԵԲԿՏ-ի կարևորագույն բնութագրիչներից է: Եվրոպայում առկա են աշխարհագրությունից անկախ ուսման արդյունքների փոխճանաչման հուսալի մեխանիզմներ՝ Եվրոպական կրեդիտների փոխանցման համակարգ(ECTS), դիպլոմի միասնական ներդիր, ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ (ENIC/NARIC) ցանց, որոնք լայնորեն օգտագործվում են միջազգային և Եվրոպական տարածքում ուսանողների շարժունության խթանման և ընդլայնման նպատակով: Ակադեմիական շարժունության համարժեք պայմաններ են ստեղծված նաև դասախոսների և գիտաշխատողների համար:

Հայաստանում մեծածավալ աշխատանքներ են կատարվել նաև շարժունության խթանման և որակավորումների ճանաչման ուղղությամբ: 2004թ.-ին ՀՀ Ազգային Ժողովը վավերացրել է Լիսաբոնի որակավորումների ճանաչման կոնվենցիան, որը իրավական հիմք է հանդիսացել «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» (ԱՓՇԱՏԿ) հիմնադրամի ստեղծման համար:

ԱՓՇԱՏԿ հիմնադրամը 2006թ.-ի հունվարից դարձել է միջազգային ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ ցանցի լիիրավ անդամ: Ներկայումս ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ ցանցի բոլոր եվրոպական անդամները և նմանատիպ կենտրոնների այլ տարածաշրջանային (Միջերկրական, Ասիա-Խաղաղօվկիանոսյան և այլն) ցանցերը պաշտոնապես ճանաչում են ԱՓՇԱՏԿ-ը որպես Հայաստանյան ներկայացուցիչ: 2006թ.-ից ԱՓՇԱՏԿ-ի կողմից իրականացվում է օտարերկրյա որակավորումների գնահատում և ճանաչում՝ համաձայն Լիսաբոնի կոնվենցիայի և միջպետական համաձայնագրերի դրույթների: Արտերկրում ձեռք բերված որակավորումները ՀՀ-ում անցնում են գնահատման և ճանաչման գործընթաց, որի արդյունքում տրվում է որակավորման ամբողջական, մասնակի ճանաչման կամ մերժման

տեղեկանք՝ հայերեն կամ անգլերեն լեզուներով, համաձայն միջազգային չափանիշների: ՀՀ-ում ձեռք բերված որակավորումներն արտերկրներում

1 http://www.anqa.am/

2 ՀՀ կառավարության N332-Ն որոշում, 2011 թ. մարտի 3

անցնում են նմանատիպ գնահատման և ճանաչման գործընթաց, որն իրականացվում է ընդունող երկրի համապատասխան լիազոր մարմնի կողմից: Այդ նպատակով ԱՓՇԱՏԿ-ի կողմից ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ ցանցի անդամ երկրների լիազոր մարմիններին տրամադրվում է տեղեկատվություն և խորհրդատվություն: Այսպիսով, Հայաստանն այսօր միջազգային և եվրոպական պահանջներին համապատասխան իրականացնում է դիպլոմների և կրթական վերջնարդյունքները հաստատող այլ փաստաթղթերի՝ վկայականների և այլն,

փոխճանաչման գործառույթ:

Ուսանողների մասնակցության և ներգրավվածության բարձրացում: Ուսանողների մասնակցությունը բուհի ակադեմիական և կառավարման գործընթացներին խիստ կարևորվում է ԵԲԿՏ-ում, քանի որ ուսանողները հանդիսանում են բարձրագույն կրթության հիմնական շահառուները: ՀՀ-ում իրականացվել են մի շարք կարևոր քայլեր ուսանողների դերի և ներգրավվածության բարձրացման ուղղությամբ: Մասնավորապես, 2004թ.-ին ընդունված «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով սահմանվել են ուսանողների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքով սահմանվել է, որ ուսանողն իրավունք ունի ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար պարտադիր և ոչ պարտադիր դասընթացներ, մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը (ուսումնական դասընթացների և մասնագիտացման ընտրությանը), մասնակցելու բուհի համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին, բողոքարկելու բարձրագույն ուսումնական հաստատության ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները և այլն: Օրենքը նաև սահմանել է, որ բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսանողները կարող են միավորվել ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում և ուսանողական այլ կազմակերպություններում, որոնց ստեղծման և գործունեության կարգը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը: Համաձայն «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի՝ բուհական պրոֆեսորադասախոսական կազմը, գիտաշխատողները և ուսանողներն օժտված են ակադեմիական ազատություններով: Նրանք իրավունք ունեն մասնակցելու համալսարանի գործունեությանն առնչվող բոլոր խնդիրների քննարկմանը և ընտրովի մարմինների աշխատանքին:Ըստ այդմ ներկայումս բուհերի կառավարման մարմիններում անդամների թվի առնվազն քսանհինգ տոկոսն ուսանողներն են, որոնց առաջադրումն ու

ընտրությունն իրականացնում է համապատասխան մակարդակի ուսանողական ինքնակառավարման ընտրովի ներկայացուցչական մարմինը՝ ուսանողական խորհուրդը: Կարևոր առաջընթաց է նաև ուսանողներին աջակցող և խթանող կառույցների ստեղծումը ազգային մակարդակում: Ներկայումս Հայաստանում գործում են մի քանի կառույցներ, ինչպիսիք են Հայաստանի երիտասարդական հիմնադրամը, Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիան, Հայաստանի երիտասարդության ազգային խորհուրդը, որոնք իրականացնում են բազմաբնույթ ծրագրեր՝ ուղղված ուսանողների և երիտասարդության խնդիրների լուծմանը, խթանում են ուսանողական ակտիվությունը և նախաձեռնողականությունը, ինչպես նաև մասնակցում են ուսանողների ներգրավվածության բարձրացմանն ուղղված քաղաքականության ձևավորմանը: Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիան սկսել է նաև Եվրոպական ուսանողական միությանն անդամակցելու գործընթացը,

ինչը կարևոր քայլ է միջազգային ուսանողական կառույցների հետ կապերի ամրապնդման և արդյունավետ քննարկումների ու փորձի փոխանակման հարթակի ստեղծման ուղղությամբ:

ՀՀ կրթության և գիտության ոլորտում ակտիվ աշխատանքներ են ծավալվում ԵՄ-ի տարբեր երկրների միջև կրթության և գիտության ոլորտներում միջպետական համագործակցությունն ընդլայնելու նպատակով: Ներկայումս ՀՀ կրթության և գիտության ոլորտներում համագործակցության ուղղությամբ միջպետական պայմանագրեր են կնքված շուրջ 20 եվրոպական երկրների հետ: Աշխատանքներ են տարվում այդ երկրների ցանկը մեծացնելու ուղղությամբ: Միջպետական պայմանագրերը մեծապես նպաստում են ուսանողների, դասախոսների և գիտական աշխատողների շարժունությանը, շարունակական կրթության ապահովմանը, ուսումնական հաստատությունների միջև գործնական կապերի ստեղծմանը, և այլն:

Բարձրագույն կրթության ոլորտում տրանսեվրոպական համագործակցության սխեմա է ԵՄ-ի Տեմպուս (Tempus) ծրագիրը, որի նպատակն է նպաստել Եվրոպայի նոր անկախ պետությունների բարձրագույն կրթական համակարգերի և մասնավորապես մարդկային ռեսուրսների զարգացմանը, ինչպես նաև խթանել համագործակցությունը այդ երկրների բարձրագույն կրթական հաստատությունների միջև: Տեմպուսի ծրագրերում Հայաստանի բարձրագույն կրթական հաստատությունները ներգրավված են ավելի քան տասը տարի:

Հիմնախնդիրները և մարտահրավերները: Չնայած իրականացված մեծածավալ աշխատանքներին, ՀՀ կրթական համակարգի ԵՄ-ի հետ ինտեգրման գործընթացում դեռևս առկա են բազմաթիվ հիմնախնդիրներ և մարտահրավերներ: Իրականացված փոփոխություններն ունեն հետագա զարգացման ու կատարելագործման անհրաժեշտություն և իրենց հիմնական շահառուներին՝ ուսանողներին, դասախոսներին և գործատուներին, ուղղակիորեն հասնելու անհրաժեշտություն: Այսօր առաջնային է ուսանողների, դասախոսների և գործատուների առավելագույն ներգրավումը Բոլոնիայի

գործընթացի հետագա զարգացումներում և խիստ կարևոր է նորաստեղծ կառույցների և գործընթացների ու ընթացակարգերի ամբողջական ընկալումը և ընդունումը ինչպես համալսարանական հանրության՝ ուսանողների, դասախոսների, վարչական և ղեկավար կազմի, այնպես էլ հասարակության լայն խավերի կողմից:

Հիմնախնդիրների և մարտահրավերների թվում կարևոր է առանձնացնել հետևյալ ուղղությունները.

1. ***Բարձրագույն կրթության հավասար մատչելիություն*** հասարակության բոլոր խավերի համար և բարձրագույն կրթության մեջ ընդհանուր ընդգրկվածության աճ: Չնայած այն հանգամանքին, որ վերջին տասնամյակում բարձրագույն կրթության ընդգրկվածությունը Հայաստանում զգալիորեն աճել է (գրեթե 50%-ով) հասնելով մոտ 30%-ի, այն դեռևս ցածր է միջին եվրոպական ցուցանիշից: Արևմտյան Եվրոպայի երկրներում բարձրագույն կրթության մեջ ընդհանուր ընդգրկման ցուցանիշը կազմում է 45%-ից 50%, իսկ Շվեդիայում և Նորվեգիայում այն կազմում է 65%: Հայաստանում կարևոր հիմնախնդիր է նաև բարձրագույն կրթության մատչելիությունը հասարակության տարբեր խավերի համար: Մասնավորապես, ցածր եկամուտ ունեցող և գյուղական բնակավայրերից ընտանիքների երեխաների բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունները շատ ավելի սահմանափակ են, քան բարեկեցիկ և քաղաքաբնակ ընտանիքների երեխաներինը:

Այսպիսով, բարձրագույն կրթության մեջ ընդհանուր ընդգրկվածության աճը և մատչելիության ապահովումը կար-

նոր մարտահրավեր է, ինչը նաև ԵԲԿՏ-ի նոր տասնամյակի գործողությունների ծրագրի հիմնական ուղղություններից (սոցիալական) մեկն է:

2.***Բարձրագույն կրթության ֆինանսավորման մեխանիզմը*** հիմնականում հիմնված է մուտքերի, այլ ոչ թե ուսման արդյունքների վրա, թեև Հայաստանում անցում է կատարվել պետպատվերի համակարգից ուսանողական նպաստների համակարգի: Այլ կերպ ասած, ֆինանսավորման հիմքում ընկած է բուհերի ուսանողների թիվը, այլ ոչ թե համապատասխան գիտելիքների պաշար և հմտություններ ունեցող շրջանավարտների թիվը: Աշխատաշուկայում մասնագետների պահանջարկը, տնտեսության զարգացման առաջնային ուղղությունները և ուսանողների ընտրությունը աննշան դեր են խաղում բարձրագույն կրթության ֆինանսավորման գործող համակարգում:

Այսպիսով, բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի բարեփոխումը, ներառյալ՝ բուհերի ֆինանսավորման աղբյուրների և մեխանիզմների դիվերսիֆիկացիան, ուսանողների ֆինանսական աջակցության պետական ծրագրերի հասցեականության և արդյունավետության բարելավումը, ուսանողների ֆինանսական աջակցության ծավալների և ձևերի ընդլայնումը, բարձրագույն կրթության պետական ֆինանսավորման ծավալների ավելացումը, բարձրագույն կրթության և գործարար միջավայրի համագործակցության խթանումը և բարձրագույն կրթության մեջ մասնավոր ներդրումների խրախուսումը, կարևոր մարտահրավեր է: Բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի բարեփոխումը նաև ԵԲԿՏ-ի նոր տասնամյակի գործողությունների ծրագրի հիմնական ուղղություններից է:

3.***Փոխճանաչման գործընթացի և շարժունության խթանում.***

Հայաստանում միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների, դասախոսների և գիտական աշխատողների շարժունությունը ինչպես ներքին՝ մեր երկրի հաստատությունների միջև, այնպես էլ արտաքին, խիստ սահմանափակ է, ինչի հիմնական պատճառներն են անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների պակասը, ոչ ճկուն ուսումնական ծրագրերը, եվրոպական չափայնությամբ և մասնակցությամբ համատեղ ծրագրերի պակասը, ակադեմիական կրեդիտների փոխանցման և փոխճանաչման մեխանիզմների ու դրանց իրավական հիմքերի անկատարությունը: Արտաքին շարժունությունը ՀՀ-ում հիմանականում ապահովվում է միջպետական համաձայնագրերի և <ERASMUS MUNDUS> ծրագրի շրջանակներում, որոնք բավարար չեն:

Այսպիսով փոխճանաչման գործընթացի և մեխանիզմների իրավական կարգավորումը Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի սկզբունքներին համապատասխան, ինչպես նաև շարժունության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և վերջինիս ընդլայնումը ներկա փուլի կարևորագույն խնդիրներից է թե Հայաստանում, թե ԵԲԿՏ-ի բոլոր երկրներում:

4.***Մասնագիտական կրթության և աշխատաշուկայի պահանջների համապատասխանություն,*** շրջանավարտների զբաղվածունակության խթանում.

Վերջին տարիներին զբաղվածության և մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների աշխատանքի տեղավորման հնարավորությունները փոքր-ինչ բարելավվել են, սակայն շրջանավարտների մասնագիտացման ու աշխատաշուկայի պահանջների միջև անհամապատասխանությունն ակնհայտ է:

Համաձայն Ազգային վիճակագրության ծառայության տվյալների 20-29 տարեկանների տարիքային խմբի շրջա-

նում գործազրկությունն ամենաբարձրն է հանրապետությունում:

Շրջանավարտների աշխատանքի տեղավորման հնարավորությունները գնահատվում են 30%-ից ցածր:

Գործատուների և ուսումնական հաստատությունների միջև գործնական կապերը թույլ են, գործատուների մասնակցությունը մասնագիտական կրթությանը փոքր է:

Մասնագիտական կրթության որակավորումների և կրթական վերջնարդյունքների վերաբերյալ գործատուների իրազեկության բարձրացումը, ուսանողների և շրջանավարտների համար կարիերայի և աշխատատեղերի որոնման աջակցության ծառայությունների որակի ու մատչելիության բարելավումը, գործատուների և ուսումնական հաստատությունների միջև գործնական կապերի ամրապնդումը կարևոր խնդիր են և ԵԲԿՏ-ի հետագա զարգացման ուղղություններ են:

5.***Որակավորումների ազգային շրջանակի ներդնում.***

ՀՀ կրթության որակավորումները և դրանց համապատասխան ընդհանրական բնութագրերը սահմանվել են ՀՀ-ի կրթության որակավորումների ազգային շրջանակում՝ համաձայն Եվրոպական որակավորումների շրջանակի, ինչը հանդիսանում է ԵԲԿՏ-ի զարգացման հիմնական գործիքներից մեկը:Սակայն որակավորումների շրջանակի հաստատումը միայն առաջին քայլն է այդ գործընթացում: Հայաստանի կրթական որակավորումների ազգային շրջանակից բխող գործողությունների իրականացումը և վերջինիս ինքնահավաստագրման գործընթացի իրականացումը ՀՀ ԿԳ նախարարության առաջնահերթ մարտահրավերներից է: Բոլոր մասնագիտությունների բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերի բովանդակության համադրման և ներդաշնակեցման անհրաժեշտություն ևս կա:

6.***Բարձրագույն կրթության և գիտահետազոտական աշխատանքների ինտեգրում.***

Հայաստանում գիտահետազոտական աշխատանքները բաժանված են 3 տիպի

կազմակերպությունների միջև, մասնավորապես՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան իր գիտահետազոտական ինստիտուտներով, ոլորտային նախարարությունների գիտահետազոտական ինստիտուտները և բուհերը:

Այսպիսի կառուցվածքը և, հետևաբար, մասնատված ֆինանսավորումը, չի նպաստում գիտահետազոտական աշխատանքների գծով պետական ծախսերի արդյունավետության բարձրացմանը: Մյուս կողմից, մասնատվածությունը, ինչպես նաև ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների ավանդական տարանջատումը նվազեցնում է ինչպես ուսումնական գործընթացի, այնպես էլ գիտահետազոտական աշխատանքների որակը բուհերում:

ԵԲԿՏ-ի բոլոր երկրներում և Հայաստանում բուհերի զարգացման օրակարգային խնդիր է բարձրագույն կրթական ծրագրերում, հատկապես մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերում հետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացումը և դրանով իսկ բարձրագույն կրթության որակի բարձրացմանը նպաստելը:

7.***Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի կատարելագործում.***

ՀՀ միջին և բարձրագույն մասնագիտական կրթության համար առաջնահերթ խնդիր է ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի լիարժեք ներդրումը և դրա ճշգրիտ օգտագործումը՝ կրեդիտային կառուցվածքով ճկուն ծրագրերի ստեղծման համար: Բուհերում դեռևս առկա են խնդիրներ կապված կրեդիտների կուտակման և փոխանցման ընթացակարգերի կիրառման հետ, մասնավորապես, խնդրահարույց են մնում կրեդիտների

հաշվարկը և շնորհումը՝ համապատասխան ծրագրային միավորների կրթական վերջնարդյունքների ու ուսանողական լրիվ աշխատաբեռի հիման վրա, նախորդող ուսումնական շրջաններում և միջբուհական շարժունության ծրագրերում ուսանողների կուտակած կրեդիտների անարգել ճանաչումը բուհերի կողմից և այլն:

Իրականացված կառուցվածքային փոփոխությունները և կրեդիտների ներդրումը բուհերում չեն ուղեկցվել կրթական ծրագրերի բովանդակային փոփոխություններով, ինչը ևս ներկա փուլի կարևոր հիմնախնդիրներից է:

Հեռանկարային խնդիր է նաև կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի ներդնումը միջին մասնագիտական համակարգում:

8. ***Ուսանողակենտրոն ուսուցման խթանում, բուհերի կառավարման և ակադեմիական գործընթացներում ուսանողների մասնակցության բարձրացում.***

Հայաստանյան բուհերում դեռևս գերակշռում են ուսուցման ավանդական մեթոդները, որոնք չեն խրախուսում ուսանողների ինքնուրույն աշխատանքի, վերլուծական մտածողության և անհրաժեշտ որակների ձևավորումը: Չնայած օրենսդրական հիմքերի առկայությանը, ուսանողների իրական մասնակցությունը բուհերի կառավարման և ակադեմիական գործընթացներին բավարար չէ: Միջազգային ուսանողական կառույցների հետ հայաստանյան ուսանողական կառույցների կապերը թույլ են, իսկ դրանց աշխատանքներին հայաստանյան ուսանողները դեռևս չեն մասնակցում:

ԵԲԿՏ-ում առանձնահատուկ կարևորություն է տրվում ուսանողակենտրոն ուսուցման խթանմանը, բուհերի կառավարման և ակադեմիական գործընթացներում ուսանողների մասնակցության բարձրացմանը, ուսանողական կառույցների միջազգային համագործակցությանը: Ուստի Հայաստանում այս ուղղությամբ աշխատանքները շարունակում են մնալ օրակարգային խնդիր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Communiqué of the Conference of European Ministers Responsible for Higher Education, Bergen, 19-20 May 2005
2. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության
3. մասին» ՀՀ օրենք (2004թ.), ՀՀ կառավարության N 425-Ն որոշում, 2004 թ. մարտի 31
4. ՀՀ կառավարության N 2307-Ն որոշում, 2005թ. դեկտեմբերի 22
5. ՀՀ կառավարության արձանագրային որոշում, 2006թ. նոյեմբեր
6. ՀՀ կառավարության N 1486-Ն որոշում, 2008թ. նոյեմբերի 27
7. ՀՀ կառավարության N959-Ն, N 978-Ն որոշումներ, 2011թ հունիսի 30
8. http://www.anqa.am/
9. ՀՀ կառավարության N332-Ն որոշում, 2011 թ. մարտի 3

РЕФОРМЫ СИСТЕМЫ УПРАВЛЕНИЯ ВЫСШЕГО И ПОСЛЕВУЗОВСКОГО ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ

НАЗИК АРУТЮНЯН

заведующая кафедрой педагогики, факультет армянской филологии, Ереванский Государственный Университет

АИДА ТИГРАНЯН

Аспирант кафедры педагогики факультета армянской филологии ЕГУ

В статье отражены реформы, осуществленные в системе высшего образования Армении, направленные на внедрение и запуск систем, способствующих интеграции в Европейское пространство высшего образования. Представлены основные задачи, выявленные в результате исследования процессов, соответствующих требованиям Болонской системы обучения.

MANAGEMENT SYSTEM REFORMS IN THE HIGHER AND POSTGRADUATE PROFESSIONAL EDUCATION

NAZIK HARUTYUNYAN

Head of Chair/Chair of Pedagogy, Faculty of Armenian Philology, Yerevan State University

AIDA TIGRANYAN

Postgraduate Student of the Department of Pedagogy, Faculty of Armenian Philology, YSU

The article reflects the reforms implemented in higher and post graduate professional education system in Armenia, aimed at founding and operating systems to facilitate integration into the European Higher Education Area. It presents the main issues and challenges that are identified in the research process, which meet the requirements of the Bologna process.